

Ծոյն ըզյետինս իւր յեղյեղէ նըւագս ի մեղմ ինչ դայլայլիկ
 Զողջոյնն անշուշտ հըրաժեշտի ի շըշընջիւն տալով քաղցրիկ:
 Սահէաք մեր, իբր ի վերայ սառամանեաց Թուլղեայ որդին
 Նըստեալ ի կառս եղջերուածիգ հիւսիսայգին սիրուն լուսոյն
 ի սիրտ լըցեալ հաճոյութեամբք ընդ բընութեան գեղաւոր ձօն:...

Այլ աւանիկ շընորհալին հասեալ ի դուռն երկնից լուսայգ,
 Զոսկեղինիկ թագաւորին տայ ըզհաճոյ լուր գալըստեան.
 Աստեղք զըմբուստ յերփն ի կարմիր ի շափիւղայն մըտեն ի ծով,
 Զինչ կոյս ի նոր սէր կարմըրիկ կապոյտ յալիս սըրտին ի զով.
 Իսկ վեհ բամբիշն յօժարակամ դառնայ լուսին յաղեղն և յորս,
 Յաւերժհարսունք յոփինաճեմք կազմեն ներայն զըսպայից գունդ,
 Զինչ ալք մանունք հողմոց ի վազս և ի սոցայն սաղարթք կանգունք:
 Եւ ինքն իսկ այգ շուշանոտնեայ գերկնից կապոյտն ի հուր շըրջեալ,
 Պէս վառելոյն ի սիրահար պատանւոյն դէմս վարդատրաշէկ
 Որ ըզսըրտին ունիցի՝ բերեալ ի ձեռս ըզձայեալ կոյս,
 Եւ ծիծաղկոտ աչօքն անհետ ինքն եւս տակաւ լեալ առ տակաւ,
 Արեւն յերկնից լուսակարկաջ եկն յերեւան տիեզերաց,
 Վըսեմութեամբն ըզսիրտս ամէն ի պատկառանս հրաւիրելով,
 Եւ մարդասէր նետիւքն ըզկեանս արծարծելով ի յերակունս.
 Փառք ցոլանան աստուածապէս, ո՛վ վեհ դիւցազն, ի քոյդ յաչկունս:...


Յայն արեգակ կամք Բարձրելոյն կալեալ ըզխելս մերոյ նաւուն
 Մըզէր յառաջ առ մեր ծընողն ածել ըզմեզ Բիւզանդ ի ճեպ:
 Սիրտն իմ անդորր ի գիշերին ի ծընանիլ աւուրն ի յոյզս
 Անկաւ սաստիկ, ըզսակս էրէն գիտեմ ո՛չ ինչ, և յերկեղուկս:
 Զորօրինակ այր անցաւոր գնալով ընդ վայրն ի գիշերի՝
 Ուր լուռ նոճիք ոգեաց մարդկան ի սեւամաղձ կան պահապանք,
 Տեսցէ նըւագ ի յառաջին հուր շըրջմովիկ յանկարծ զիւրեաւ
 Վարազանալ գամ քան ըզգամ. պակուցեալ ինքն առնու փախչիլ,
 Առ ի հըրոյն չըկարելով կալ զայրութից յակաստանի.
 Սապէս զինեւ մոլեգնեալ ահ իմն անծանօթ սըրտիս ցայնժամ
 Ըզխորհըրդոց և զանձին կորգեաց ի բուռն ըզսանձս յինէն:
 Որքան մարմինս մերձի՝ քաղաք, նոյնքան և սիրտս յետս ընկըրկի.
 Խընդրեմ ի ջուրց և ի հողմոց ի խոտորում մատնել զուղիս.
 Յանկամ այո՛ ես նըշմարել և զազգահանս և բարեկամս,
 Այլ երկուցեալ տատանիմ յիս իբր ի հողմոց տերեւք յանտառս.
 Զաչս իմ ի ծով ես բեւեռեմ, արօտս յիմար վիժեալ ի գետ,
 Երբ ըզդահճաց իմոց լըսեմ բիւզանդաձին ձայն թըռչնեկաց.
 Այսպէս իբր հէն ի կախաղան մատչիմ ի դող ես ի քաղաքն,
 Որոյ յախուռն ժողովըրդոց հարուն զունկն իմ ձայնք բազմադէմք,
 Եւ սարսփմ. բայց և հարկեալ չըգիտեմ յո՞ր զօրութենէ
 Ըստիպիմ արդ հայիլ ի դէմս ժամանելոյս իմ ծընողի,
 Ծով յաղընթաց յեղեալ ըզսիրտս ի մըրըրիկ հայեցուածոյս:
 Յերես այլոց ինձ ուղեկցաց՝ տեսեալ ըզշող ուրախութեան
 Եւ ի նոցունց անգամ սարսուռ ըզգամ զընալ յիս դիմաց տես:...

Հուսկ ապա ի Բիւզանդեանն առնումք ըզկայ ի գոգամէջ.
 Նաւակը փոքրիկ խըռնին ըզմեօք, և պէս այլոց որոնեմ 'ւ ես

Թէ ի յեկեալսն իցէ ոք յիմ ի ծանօթից կամ ի յեղբարց,
 Խընդրեմ աչօք, այլ ինձ ի սիրտս պատուիրեմ մի զըտանել զոք:...

Ահա եղբայրն իմ և քեռի զիս ի յակատն առնուն իւրեանց
 Ահա ի տան եմ 'ւ ի բազուկս Հօր, Մօր, Եղբարց և իմոց Քերց:
 Խառնաշըփոթ յաւուրն յայնմիկ կայթեն ի յիս կիրք զանագան,
 Տըխրութիւն, Ահ և Բարկութիւն, և որ պիտէրն՝ Սէր միայն ո՛չ.
 Եւ զերթ ասուպ սրացեալ ընդ օդ և ի կուսին փայլեալ ի դէմս
 Ուրախութիւն իմըն կեղծեալ երբեմն իսկ զիմ վառէ երես,
 Այլ ընդ կեղծելն իմ այդ սըրտիս առաւել եւս ըզգամ զայրոյթ.
 Ըզձամ ես կալ ափիբերան, բայց ըստիպիմ խօսել անդու.
 Ատեմ ես մարդ ես զամենայն, որ բընակին ի Բիւզանդիոն,
 Ատեմ և զանձն իմ զի մըտի անդ ուր մըտել կաթոգնէի:
 Այսպէս զիս մութ ի տըւընջեան, այլ երբ երկին զիշերացաւ
 Փարատեցան գամ քան ըզգամ մէգքս այսոքիկ ի յիմ մըտաց,
 Արփիացաւ ինձ թուի գիշերն քան զոր պայծառ երբէ՛ք արեւ.
 Անդ որպէս էն զամէն տեսի յայնժամ ես զիրբս ուղղապէս,
 Տեսի ծընողս ինձ փարելիս, տեսի աղջկունքս գեղերես,
 Տեսի զերկին ես կենսաձիր, տեսի աշուն պըտղամատոց,
 Տեսի զսիրոյ հըրաւիրողս լերինս կաթանց և մարգս ի դոյլթ,
 Տեսի՛ և զԱզգս համատիպար սըրտի ծովուն՝ որ երբ ի գիրկ
 Թըւի անկեալ անդորրութեան, յանկարծ ժայթքէ փըրփուրս ի վեր՝
 Շըրջացայտեալ ամենուրեք մահու հարուածս անվրիպելիս:
 ԶՍէր Հայրենեաց առ Արեգակն ունին բարեաց Հայք համօրէն.
 Այլ ե՛ն որ զհուրն անցուցանել ջանան նորին ընդ սուրբ լուսոյն,
 Ե՛ն և ճըգնողք առ անգիշեր առնել զայս յար Արփիս Հայոց.
 Տէր արասցէ ասպարափակ ի խաւարէ զԱրեւս Հայոց:

Ի Կ. Պոլիս



Ե Ր Գ Մ Ա Ն Կ Ա Ն Յ

(Նրախտագետ մըմունքը Ռափայէլեան Վարժարանի աշակերտաց)

Որպէս ըզմեղ և դու Տէր մեր
 Մանուկ մատաղ յերկրի եղեր.
 Ի պաշտպանողսն մերոյին
 Առատազեղ տուրք քօ հեղցին:

Անխոնջ սիրով սիրաբ պատարուն
 Տացեն կատար սըրբոյ գործոյն:
 Քոյոց ձըրկն երկնատեղաց
 Արժանի են նոքա, Աստուած:

Վենետիկ, 1888

ՅՈՎԱԿԻ ԽՍԿԵՆՏԵՐ
 Աշակերտ Ռափայէլեան Վարժարանի